ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԵԱՀԿ ԽՎ. ՆԱԽԱԳԱՀ ԺՈԱՌ ՍՈԱՐԵՇԻՆ

Մարտի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ժոաո Սոարեշի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին՝ Վեհափառ Հայրապետը կարեւորեց պատվիրակության այցը Հայաստան, որի շնորհիվ հաղորդակից են դառնում մեր երկրի եւ ժողովրդի առջեւ ծառացած խնդիրներին: Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի նախագահին աշխարհում խաղաղության ամրապնդման գործում եւ մասնավորապես ԼՂՀ հակամարտության խաղաղ կարգավորման գործում ԵԱՀԿ-ի կողմից ներդրված ջանքերի համար: «Լիահույս ենք, որ ԻԱ դարը արդարություն կբերի նաեւ տասնամյակներ եւ հարյուրամյակներ շարունակ մեր ժողովրդին հուզող հարցերին»,-ասաց Վեհափառ Հայրապետը:

Պատասխան խոսքում պարոն Ժոաո Սոարեշը անդրադարձավ ԵԱՀԿ-ի ներկայիս գործունեությանը: Նա իր հարգանքն արտահայտեց Հայ Եկեղեցու նկատմամբ՝ նշելով եկեղեցու դերակատարությունը տարածաշրջանում:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ հայ-թուրքական եւ հայ-ադրբեջանական հարաբերություններին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Մարտի 12-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Լեհաստանի Հանրապետության վարչապետ Դոնալդ Ֆրանցիշեկ Տուսկին:

Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց երկու երկրների միջեւ շփումները տարբեր մակարդակներում, որոնք ընդլայնվում են եւ նորանոր ոլորտներ ընդգրկում: Նորին Սրբությունն անդրադարձավ երկու ժողովուրդների միջեւ եղած պատմական առնչություններին, ապա ի դեմս վարչապետի իր գնահատանքը հայտնեց Լեհաստանի իշխանություններին հայ համայնքի հանդեպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Հայոց Հայրապետը գոհունակությամբ նշեց, որ Լեհաստանի իշխանությունների աջակցությամբ Լեհաստանի հայ համայնքն առաջիկայում կունենա իր հոգեւոր հովիվը, որ կկազմակերպի համայնքի հոգեւոր կյանքը:

Իր հերթին Լեհաստանի վարչապետը շնորհակալություն հայտնեց ընդունելության համար, ապա անդրադարձավ հայ-լեհական հարաբերություններին: Վարչապետը մեծապես կարեւորեց նաեւ հավատի դերը եւ Եկեղեցու առաքելությունը ժողովրդի կյանքում՝ անդրադառնալով Լեհաստանի ժողովրդի հոգեւոր կյանքին:

ԵՐԿՆԵՐ Լոռիի հայոց թեմի առաջնորդ Գարեգին Սարգսյանը Վանաձորում գտնվող Լեռնային Ղարաբաղի նախագահի Բակո Սահակյանի հետ